

## Մենք փնտրում ենք բարձր որակավորմամբ մասնագետ խորհրդատուի պաշտոնի համար

### Մեր մասին

Ի-Վի Քոնսալթինգը գործարար խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է մրցունակության և նորարարության հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

### Աշխատանքն ընկերությունում

- ✓ *Գրավիչ առաջադրանքներ.* Ի-Վի Քոնսալթինգում խորհրդատուի աշխատանքը ներառում է գործունեության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են շուկայի հետազոտությունը և վերլուծությունը, ֆինանսական վերլուծությունը և պլանավորումը, ներդրումային առաջարկների պատրաստումը, առանձին ճյուղային հետազոտությունները և վիճակագրական տվյալների վերլուծությունը. ցանկացած առաջադրանք կատարելիս խրախուսվում է ստեղծագործական մոտեցումը;
- ✓ *Ոչ ստանդարտ դերակատարում.* Ի-Վի Քոնսալթինգը յուրաքանչյուր աշխատակցի ապահովում է չկրկնվող հանձնարարություններով, որոնք նպաստում են հարատև մասնագիտական աճին;
- ✓ *Դժվար հաղթահարելի մարտահրավերներ.* մենք մեծապես գնահատում ենք ցանկացած առաջադրանք կատարելիս բարձր որակ ապահովելու աշխատակիցների ձգտումը՝ ժամանակային շատ խիստ սահմանափակումների պայմաններում;
- ✓ *Յուրահատուկ հնարավորություններ.* մեզ համար ցանկալի հավակնորդը կգնահատի այն աշխատանքային միջավայրը, որտեղ մարդիկ ավելին են, քան ուղղակի աշխատակիցներ:

### Մասնագիտական և գործնական հմտությունների պահանջներ

- հայերենի, ռուսերենի և անգլերենի գերազանց իմացություն,\*
- վիճակագրական տվյալների հետ աշխատելու ունակություն,
- վերլուծական և հետազոտական ունակություններ,
- խնդիրներ լուծելու ունակություններ,
- համակարգչային հմտություններ,
- բարձրագույն կրթություն բիզնեսի կառավարման կամ հարակից ոլորտներում, հավելյալ մաթեմատիկական կամ տեխնիկական կրթությունը առավելություն է,
- 2-3 տարվա աշխատանքային փորձ,

### ինչպես նաև

- մեր թիմին միանալու ցանկություն և նպատակներին հասնելու համար առավելագույն ջանքերի գործադրման պատրաստակամություն:

Եթե վստահ եք, որ համապատասխանում եք վերոնշյալ պահանջներին և հենց այն մասնագետն եք, ում մենք փնտրում ենք, ապա կապվեք մեզ: Խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը և տվյալ պաշտոնին հավակնելու Ձեր պատրաստակամությունը ներկայացնող նամակ հետևյալ էլ. հասցեով՝ [info@evconsulting.am](mailto:info@evconsulting.am). Դիմումներն ընդունվում են մինչև 2011թ. հունիսի 4-ը: Խնդրում ենք չզանգահարել:

\* հույժ կարևոր է նշված լեզուների գրավոր գերազանց իմացությունը

